

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՐԻԻՎԱՅԻՆ ՄԻ ՆՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 1812 թ.  
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ռուս ժողովրդի 1812 թ. հայրենական մեծ պատերազմը օտար բռնակալների և ազրեսորների դեմ նրա մղած դարավոր պայքարի ամենափայլուն էջերից մեկն է: Համաշխարհային տիրապետութեան ձգտող Նապոլեոնի հզոր բանակները, որ գրավեցին գրեթե ամբողջ Եվրոպան, գլխովին ջախջախվեցին Ռուսաստանում՝ հայրենական պատերազմի դուրս եկած ռուս մեծ ժողովրդի հուժկու հարվածների տակ:

Նապոլեոնի դեմ ռուս ժողովրդի մղած հերոսական այդ պատերազմի մասին կան ոչ քիչ քանակութեամբ հրատարակված ուսումնասիրութեաններ ու գրավոր դոկումենտներ: Տարբեր ժամանակներում հրատարակվել են նաև այդ պատերազմի ժամանակակիցներից մի քանիսի հուշերն ու տպավորութեանները: Սակայն մեր արխիվներում կան դեռևս չհրատարակված մի շարք փաստաթղթեր, որոնք պակաս հետաքրքրութուն չեն ներկայացնում 1812 թ. հայրենական մեծ պատերազմի ամբողջ վեհութունն ու հանդամանքները հասկանալու և պարզաբանելու համար: Այդպիսի, մինչև օրս անձանթ մնացած ու չհրատարակված արխիվային փաստաթղթերից մեկի վրա է, որ այստեղ ցանկանում ենք հրավիրել մեր գիտական շրջանների ուշադրութեանը:

ՀՄՍՌ Մյաննիկյանի անվան Կենտրոնական Հանրային գրադարանում պահվում է Լազարյան ձեմարանի արխիվը, որը նայելու ժամանակ մենք հանդիպեցինք հայ հարուստ առևտրական, ցարական կառավարութեան պատասխանատու շրջանների հետ կապ ունեցող Հ. Լազարյանի նամակներից մեկին: 1812 թ. դեկտեմբերի 19-ին գրած իր այդ նամակում Լազարյանը, որպես ժամանակակից, պատմում է 1812 թ. հայրենական պատերազմի, Նապոլեոնի բանակների ջախջախման և այլ հարցերի մասին: Նամակը գրված է Պետերբուրգում և հասցեագրված է ոմն Աստվածատուր արքեպիսկոպոսի: Լազարյանի այդ նամակը գրված է հայերեն լեզվով և ունի երկու վարիանտ (տես Լազարյան ձեմարանի արխիվ, գործ № 104, դոկումենտներ № № 9 և 10), որոնք, ինչպես պետք է ենթադրել, սևագրութեաններ են: Այդ երկու վարիանտում էլ կան ջնջումներ, որոնք մենք այստեղ տալիս ենք, առնելով նրանք փակագծերի մեջ: Ահա այդ նամակի առաջին վարիանտը.

«Արրազնագունեղ հայր Աստուածատուր Արքեպիսկոպոսիդ սրբոյ Աջոյն (համբոյր) մատուցանեմ զհամբոյր.

Ձերոյ Սրբազնութեան օրհնառաք նամակքն ի 20 և ի 28 ապրիլի նաև ի 15-էն յունիսի դրեալ (մեծաւ) յարգամամբ իւրաքանչիւրն ի ժամանակին ընկալեալ մատուցանեմ իմոյ զգերագալի շնորհակալութիւն, թէև կանխաւ հարկ էր ինձ (զսոյն) զխոնարհական գրութիւն իմ փութացուցանել (առ ձեր սրբազնութիւն), բայց զանազան խառնակութիւնք տեղոյս որպիսութեանց՝ որք և բազում զբաղմունք իմ և անհանգստութիւն մտաց արգելք եղեն ինձ մինչև ցարդ լրացուցանել զայն պարտաւորութիւն իմ, առ որ յուսամ (ներողամտութիւն ստանալ ի սրբազնագունեղ հօրդ իմոյ) գտանել զհայրական ներողութիւն ի Տեառնէդ սրբազնագունեղէ:

Արդ ի յառաջնոյ գրութենէ ձերոյ Սրբազնութեան տեղեկացեալ՝ որ համահաճութեամբ սրբազնակատար քահանայապետի և բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Աթոռոյն մերոյ, սրբազնագունեղ հօրդ իմոյ վիճակեցաւ լինել ծայրագոյն հոգևորական կառավարիչ կողմանցդ, վասն որոյ զբարի գալուստն ձեր շնորհաւորելով մաղթեմ ի տեառնէ պարգևել ձեզ յաջողութեամբ լրացուցանել զսոյն հոգևոր պաշտօն ձեր ի բարեկարգութիւն յանձնեցեալ ձեզ հօտին, ի կատարումն բարեմիտ և ազգօգուտ կամաց սրբազնակատար քահանայապետին և բարձրագոյն խորհրդաբանի սրբոյ Աթոռոյն և ի միթարութիւն համայն մերազնէիցս:

Ի ներ երկրորդին (գրութեան) յառանձնական գրութենէ ձերոյ ծանօթացայ վասն յանդգնութեան Մինասայ եպիսկոպոսի, որ ի ժամանակին նախկին կուսակալի կողմանցդ մարքիդ Պաւլուչի յառաջացեալ ի նմանէ յիբաւի հիացման արժանի է ախտն հոգևորականաց մերոց, որք ի ժամանակիս յայսմիկ երևեցուցին զինքնահանձարութիւն իւրեանց, որովք ոչ թէ կանգարեն բարեկարգութիւնք սրբոյ Աթոռոյն միայն, այլ և համայն ազգի մերոյ, ի գալն աստ մարքիդ Պաւլուչի որ ինչ հարկ էր յայտնեցի նմա գորպիսութենէ իրին և թէև խարրալեալ էին միտք նորա, բայց ներգործութիւնս ինչ ոչ արար, (պուցէ) իցէ թէ հետեւելով և բանից իմոց՝ լռեաց: (Սակայն կամիմ աստէն կարճառօտաբար) և այժմեայ (որովհետև) նորոգ կուսակալ կողմանցդ Նիկոլայ Ֆեդորովիչն գրով բարի անձն և բարի հօգի յուսամ զի կատարելապէս վերահասու եղեալ ճշմարտութեան հանդարտեցուցեալ իցէ զյանդգնական դիմեցմունս յիշեալ (Մինասայ) եպիսկոպոսի, առ որ ըստ (խնդածայր) կամաց ձերոց սրբազնութեան, ահա ընդ սմին առաքեցի զյանձնարարական գիր վասն ձեր՝ յիշելով, ի նոյն և վասն Մինասայ եպիսկոպոսի հակառակութեանցն:

Վասն տեղոյս պատերազմական որպիսութեանց ծանուցանեմ ձերոյ սրբազնութեան՝ որ զկնի (բագում) սաստիկ աւերմանց (ի կողմանէ թշնամւոյն) գանազան քաղաքաց և Մոսկովու մայրաքաղաքին, ուր (անհնարին) հրոյ նարակ եղեն ամենայն գեղեցկայարմար շինուածք և տուն, ընդ որոց և իմ մի (երկու) տունն անդ՝ հանդերձ ամենայն կարասիւք և ընչիւք (որք մնացեալ են) այրեցեալ է և միւսն կողոպտեալ իսպառ. այժմ ողորմութեամբ ամենակարօղին (Աստուծոյ) գորքն մեր (մեծաւ) յազբանակութեամբ վանեմ զթշնամին ի սահմանաց տերութեանս. անհնարին (բագմութիւն) թիւ գերեաց, հրացանից և դրօշակաց անկելոց ի ձեռս գորաց մերոց. (նաև մեծագոյն և նշանաւոր իրացն գարս թշնամին կողոպտեալ է ի Մոսկով քաղաքին և ի յայլ

տեղիս և որք վերստին անկան ի ձեռս զօրաց մերոց յաղթողաց) վկայեն (մեզ) որ թշնամին ի մեծի տագնապի և ի նեղութեան փախչի ի սահմանացս: Ապա- ռինեալ ուրեմն ի նախախնամութիւն տեսան ամենակարօղի սպասեմք յաջո- զութեամբ աւարտման պատերազմիս (ընդգծումը մերն է—Մ. Ն.)

Եւ յայլում ամենայն յանձնելով զիս ի մաքուր աղօթիցդ օժանդա- վութեան և սրբոյ աջոյ խոնարհական համբոյր մատուցանելով մնամ հա- րազատ մտերմութեամբ և վերապատուութեամբ

ձերոյ Սրբազնութեան

Ամենախոնարհ ծառայ.

Կի՛նն իմ և զաւակունք ամենեքին ջերմեռանդ խոնարհութեամբ ողջոյն մատուցանեն ձերոյ սրբազնութեան և սրբոյ աջոյդ համբոյր նուիրեն:

Գեղահեթերի 19, 1812 թ. Ս. Գ. Բուրգ.»

Նամակի երկրորդ վարիանտը.

«Բարձր Սրբազան Տէր

Ողորմածագունեղ հայր.

Նամակքն օրհնութեան ձերոյ Սրբազնութեան ի մայիսի 28 և 30, ի յու- նիսի 19, և ի յօգոստոսի 13-ին գրեցեալ, իւրաքանչիւրն ի ժամանակի ընկալեալ եմ և ուրախ լեալ ընդ ողջութիւն անձին ձերոյ, որքան և բաղ- ձայի փութով պատասխանել ձեզ՝ բայց զկնի 11-ին ապրիլի գրեցելոյս չու- նիմ մատուցեալ առ ձեզ զգիր, յուսամ ներող լինիջիք առ այն՝ գոլով ըստ բաւականին տեղակ ներհակ որպիսութեանցն անցելոց:

Մատուցանեմ զանբաւ շնորհակալութիւնս վասն հայրական սիրոյ Սրբազնութեանն զոր ունիք ցուցեալ որդւոյն իմոյ Յովհաննիսի ի ժամա- նակի ձեր և նորա հանդիպելոյ ի յԱփգարխան, որոյ վասն և նա բազմիցս գործունակութեամբ զձէնջ յիշատակեալ էր ի գրութիւնս իւր առ յիս, յու- սամ զինոյն սէր և օրհնութիւն ոչ պակասի ի նմանէ և ի մէնջ ամենեցունց:

Առ քնեազ Գոլիցին հասանելի երկու փակեալ փաքեթքն՝ որք ի սրբ- բազան հայրապետէն ի ձեռն ձերոյ Սրբազնութեան առաքեցեալք էին առ յիս (առ ի հասանելոյ քնեազ Գոլիցինին) ի ստանալն զնոսին մատուցի նմա, բայց ի պատճառէ խառնակ որպիսութեանց, չեղև հնար հետևողութիւն ինչ ի կողմանէ իմ ի գործ արկանել՝ որ վասն ժողովրդոյ սրբոյ Աթոռոյն. ի գէտ համարելով թողուլ անցանել միջոցի ինչ, մինչև տեսցուք թէ որ- պիսի տնօրէնութիւն Տեսան է լինելոց զի ըստ այնմ ներգործեսցուք:

Վասն Գրիգոր Վահրամովին ի Հայրապետէն գրեցեալ թուղթն ևս մատուցի քնեազին և յուսամ որ յարգելով զմիջնորդութիւն և զխնդիր վեհապետի՝ ոչ թողու զնոյն առանց կատարման ի պատշաճ ժամանակի:

Վասն Մօսկով քաղաքի աւերմանն ոչ բովանդակի աստե՛ն լիովին պատ- մութիւն՝ ասեմ միայն որ բովանդակ գեղեցկաշէն և երևելի տունք բնակչաց, նաև պալատն քաղաքակնք, վանօրայք և եկեղեցիք բազումք էղեն կերա- կուր հրայ և մեր երկու եկեղեցիքն անդ ողորմութեամբն Աստուծոյ մնացին անվնաս, բայց մի տունն իմ այրեցեալ է և ի միւսում ամենայն կարասիք

տան և ինչք իմ կողոպտեալ: Այժմ քշնամին վանեալ փախչի ի սահմանացս. սաստկագոյն կորուստ քե ի կողմանէ մարդկանց և գինուց և քե ի կողմանէ այլոց պատրաստութեանց նորա անպատմելի է: Իրաւի մեծ եղև ազորմութիւն Տեառն ամենագթածի ի վերայ մեր, որ գկնի այսօրեանց նեղութեանց պարգևեաց մեզ գկատարեալ ազատութիւն ի յանմարդագոյն արձակմանց քշնամույն (*ընդգծումը մերն է—Մ. Ն.*):

*Եւ յայլում ամենայնի յուսալով զի Սրբազնութիւն ձեր իցէ ի բարի դրութեան և ցանկանալով ողջութիւն անձինդ՝ մաղթեմ օրհնութեանդ օժանդակութիւն և մնամ կատարեալ մտերմու...*

*Իմայինք ամենեքին սրբոյ աջոյդ խոնարհութեամբ համբոյր մատուցանեն և զօրհնութիւն հայցեն ի Սրբազան հօրէդ:*

*1812 զեկտեմբերի 19, Ս. Պ. Բ.:*

*Հազարյանի այս նամակում, որ գրված է 1812 թ. հայրենական պատերազմի օրերին տեղի ունեցող դեպքերի ժամանակ, առանձնապես ընդգրծված է ոուս զորքերի ունեցած խոշոր հաջողությունները և Նապոլեոնի բանակի խայտառակ պարտությունը: Այս փաստաթուղթը, որ ոուս ժողովրդի 1812 թ. հայրենական պատերազմի մասին եղած հայկական աղբյուրներից առաջիններից մեկն է, միանգամ ես վկայում է ոուս մեծ ժողովրդի անսահման հզորության, արիության և հայրենասիրության մասին:*